

ւորականները մտածեն այդ ուղղութեամբ և ոչ թէ աշխատեն՝ սուտ ու մուտ փաստարանութիւններով անպատճառ սպիտակացնել ակներեւ սեւ կողմերը:

Լ. Ս.

Չ. ԳՈՒԻՑՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ. Նոր բառգիրք պատկերազարդ ճրանսահայ: Հատոր առաջին. Ա—Ի., Պարիզ, 1900. Եր. ԺԴ+1061.

Այս նոր բառարանը թուով վեցերորդն է ֆրանսերէն-հայերէն բառարանների մէջ \*), և բոլորի էլ հեղինակները տաճկահայեր են: Այս երկոյթը շատ հետաքրքրական է մեր մտաւոր կրթութեան պատմութեան համար: Այսօրեայ թուով ֆրանսերէն-հայերէն բառարանների գոյութիւնը անհերքելի ապացոյց է այն բանին, որ մեր տաճկահայ եղբայրները իրանց մտաւոր սնունդն ստանում են ֆրանսիական գրականութիւնից, ինչպէս մենք՝ ռուսերէնից. ուրեմն և նրանց լեզուի ու գրական ուղղութեան մէջ բնականօրէն պէտք է տիրապետէ ֆրանսիական ոգին: Միւս կողմից երևում է, որ մեր տաճկահայ եղբայրները թէ մայրենի լեզուի և թէ առնասարակ լեզուների ուսումնասիրութեան մէջ շատ աւելի առաջ են դնացել, քան մենք: Մենք որ մեր մտաւոր սնունդն ու լեզուային ճաշակն առնում ենք գրեթէ միայն ռուսերէնից՝ հարիւր տարուայ ընթացքում արտադրել ենք հազիւ թէ 4 ռուս-հայերէն բառարան, որոնցից ոչ մէկը չէ կարող բաւարարութիւն տալ նոյնիսկ համեստ պահանջներին, և այսօր ամեն մի կրթուած հայի ցանկութիւնն է ունենալ մի կատարեալ բառարան ռուսերէնից հայերէն: Բացի ռուս-հայ թարգմանական բառարաններից՝ ռուսահայերս չենք տուել և ոչ մի ուրիշ բառարան, ոչ թարգմանական և ոչ մայրենի լեզուի: Այն-ինչ մեր տաճկահայ եղբայրները աշխատասիրել են մի երկար շարք բառարանների, թէ լոկ մայրենի լեզուի (4 հատ) և թէ թարգմանական, գերմաներէնից, անգլիերէնից, յունարէնից, իտալերէնից, պարսկերէնից և ֆրանսերէնից հայերէն. և սրանք բոլորը, ունենալով աւելի կամ նուազ պակասութիւններ՝ այնուամենայնիւ բոլորն էլ բարձր են քան ռուս-հայերէն բոլոր բառարանները: Աւելացնեմք սրա վրայ և այն իրողութիւնը, որ թէ հայերէնի և թէ օտար լեզուների հայերէն քերականութիւններ,

\*) Առաջին հինգն են՝ Ազգերեանի (Վ.Ն.Կոտիկ), Էմիլիանի (Վ.Ի.Եննա), Նուպարեանի (Զմիւռնիա), Տադաւարեանի և Նորայրի (Ս. Պօլիս) բառարանները:



դասագրքեր, ընթերցարաններ, զրուցատրութիւններ և այլն դարձեալ արդիւնք են տաճկահայ հեղինակների, և մենք կը տեսնենք, որ այս մասում մենք չատ յետ ենք մնացել տաճկահայերից: Առհասարակ պէտք է խոստովանել, որ նրանք ուսանում, ուսումնասիրում են լեզուն, ապացոյց—այդ բազմաթիւ, բազմահատոր բառարանները, քերականութիւնները, ձեռնարկները և եւրոպական յայտնի հեղինակներից թարգմանութիւնները: Իսկ մենք այն հասկացողութիւնն ունինք, թէ լեզու սովորելը պէտք չէ. եթէ գլխումդ մի միտք ծագեց՝ գրիր. ինչ լեզուով կը լինի, հոգ չէ. կարգացողը մի կերպ կը հասկանայ—և այդքանը բաւական է: Գրականութեան մէջ գործող մարդիկ կան, որոնք դաւանում են, թէ «մեղանում ոչ ոք հայերէն լեզու չը գիտէ», որից եզրակացնում է, թէ ուրեմն «ես էլ կարող եմ չը գիտենալ՝ ու գրել, և չկայ մէկը՝ որից սովորեմ կամ որին հետեւեմ»: Մեր մէջ տիրում է մի ցաւալի նիհիլիզմ—լեզուի վերաբերմամբ:

Բայց դառնանք նոր ֆրանսահայ բառարանին: Սրա հեղինակը, որ երբեմն վենետիկի Միքիթարեան միաբանութեան անդամ էր և կոչւում էր Ամբրոսիոս վալ. Գալֆայեան՝ անուն ունեցող, փորձուած հեղինակ է, հմուտ հայերէնի և ֆրանսերէնի, ունի յաջող թարգմանութիւններ, ընդհանուր պատմութեան դասագիրք (հինգ հատոր), հայ-ֆրանսերէն բառարան և այլն: Բայց նրա գլուխ-գործոցը անաւարակոյս պէտք է համարել այս բառարանը:

Որ և է բառարանի մասին դժուար է բացարձակ դատողութիւն անել, որովհետեւ չը կայ և չէ կարող լինել կասաւեալ բառարան. ամենալաւ բառարանները ձգտում են միայն հասնել կատարելութեան, որ, իբրեւ իդէալ, անհասանելի է: Ուրեմն բառարանի մասին կարելի է դատողութիւն անել համեմատական կերպով—թէ ինչ առաւելութիւններ կամ պակասութիւններ ունի՝ ուրիշ բառարանների համեմատութեամբ. ինչ կարելի էր անել՝ լեզուի այս ինչ դրութեան մէջ, և ինչ է արուած իրապէս: Այս տեսակէտով էլ մենք նայում ենք Գ. Լուսինեանի նոր բառարանին վրայ: Ի հարկէ, նա ունենալով հինգ նախորդներ, որոնցից երեքը տպուած են վերջին տասնամեակում և դեռ չեն սպառուել՝ պէտք է մի շօշափելի պատճառ, մի *raison d'être* ունենայ իր լոյս աշխարհ գալուն. ուրիշ խօսքով՝ նա պէտք է անուրանալի առաւելութիւններ ունենայ նախորդներից: Եթէ մենք համեմատելու լինինք այս նոր բառարանը Նորայրի բառարանի հետ, որ մինչեւ այժմ եղածների մէջ լաւագոյնը և ամենից ընդարձակն է, որի հետ իսկապէս և պէտք է մրցի այս



նոր բառարանը՝ մենք կը կարողանանք նկատել նորի առաւելութիւնները և, այո՛, պակասութիւնները:

Նոր բառարանը պատկերազարդ է (մօտ 1200 նկարներ ու ձևեր), մի անպայման առաւելութիւն, որից զուրկ են եղել մինչև այսօր լոյս տեսած բոլոր հայերէն կամ թարգմանական գրական-բառարանները (բացի երկու մասնագիտական բառաներից, որոնք տպագրուած են Վենետիկում): Աւելորդ է խօսել պատկերների օգտակարութեան մասին՝ առարկան ճիշտ ըմբռնելու համար:

Նկարները ֆրանսերէն բառարանների համար պատրաստուած կլիշէներից են, և այս հանգամանքը բաւական է՝ երաշխաւորելու նրանց ճշտութիւնն ու գեղեցկութիւնը: Նրանց շնորհիւ՝ բազմաթիւ բոյսեր, կենդանիներ, գործիքներ, ճարտարապետական մանրամասնութիւններ, և այլն և այլն, պարզ պատկերանում են ընթերցողին, այն ինչ եթէ սրանք միայն խօսքերով նկարագրուէին՝ աղօտ, ուրեմն և անցողակի մութ հասկացողութիւն կը կազմէր ընթերցողը նրանց մասին: Հետևաբար այս նոր բառարանի նկարները նրա առաջին, անպայման առաւելութիւնն են կազմում միւս բառարանի համեմատութեամբ:

Միւս առաւելութիւնը՝ այս բառարանի լիակատարութիւնն է: Լիակատարութիւնը երկու տեսակէտով պէտք է հասկանալ. նախ՝ բառացուցակի (նօմէնկլատուրի) հարստութիւն, և երկրորդ՝ բառերի մշակութեան մանրամասնութիւն: Բառացուցակի հարստութեան կողմից այս բառարանը գերազանցում է ոչ միայն Նորայրից, այլ և բոլոր (մեզ ծանօթ) ֆրանսերէն մատենագրական-բառարաններից, որովհետև պարունակում է մեծ քանակութեամբ մասնագիտական և տեխնիկական բառեր, որոնք առհասարակ չեն գետնադուր մատենագրական-բառարաններում:

Օր. Նորայրի բառարանում Bichette բառին անմիջապէս յաջորդում է Bichot, այն ինչ նոր բառարանում այս երկու բառի մէջ զետեղուած են 6 բառ (քիմիական), որոնք չը կան նոյնիսկ Քաջունու Արուեստից և Գիտութեանց երկհատոր բառարանում: Նորայրի մօտ Ervoyeur բառին յաջորդում է Éolien, այն ինչ նոր բառարանը այս երկու բառի մէջ ունի աւելորդ 11 բառ՝ կենդանաբանական, երկրաբանական եւ այլն նշանակութեամբ: Նորայրի մէջ Enter և Enterrement բառերի մէջ զետեղուած են 7 բառ, այն ինչ նոր բառարանը նոյն երկու բառի մէջ զետեղել է 61 բառ, մեծ մասամբ բժշկական մասնագիտական բառեր:

Այս կերպով նոր բառարանը ձգում է միանգամայն երկու նպատակի հասնել—լինել գրական և մասնագիտական բառարան (որ շատ դժուար իրագործելի է): Եթէ Նորայրի բառարանը և առհասարակ գրական բառարանները չունին մասնագիտական բառերի բաժինը՝ սա պակասութիւն չէ. իսկ եթէ նոր բառա-



րանն ունի և յաջողութեամբ կազմել է նաև մասնագիտական բաժինը՝ այս անշուշտ առաւելութիւն է։ Բառերի մշակութեան մանրամասնութիւնն էլ դարձեալ ցոյց տանք մի քանի համեմատութիւններով։

Embarras բառը Նորայրի մէջ գրաւում է 19 տող, իսկ Նոր բառարանում՝ 37 տող \*)։ Ennemi բառը Նորայրի մէջ գրաւում է 15 տող, իսկ Նորում՝ 42 տող։ Compte բառը Նորայրի մէջ գրաւում է 62 տող, իսկ Նորում՝ 128 տող։ Faire բառը Նորայրի մէջ գրաւում է 182 տող, իսկ Նորում՝ 298 տող և այլն։

Ի հարկէ ամեն մի բառի մշակութեան մէջ չը կան այսպիսի մեծ տարբերութիւններ. կան բառեր, որոնց մէջ Նորայրը նոյնքան մանրամասն է, որչափ և Նորը, նոյնիսկ պատահում են դէպքեր՝ երբ Նորայրը աննշան չափով ընդարձակ է Նոր բառարանից, բայց այս դէպքերը բացառութիւն են։

Նոր բառարանի լիակատարութիւնը արտայայտւում է և նրա արտաքին ծաւալով, որ մօտաւորապէս երկու անգամ աւելի կը լինի քան Նորայրինը. ուրեմն և երկու անգամ աւելի նիւթ կը պարունակէ։ Ի հարկէ, Նոր բառարանում շատ տեղ են բռնում նկարները. բայց սրանց բռնած տեղը լիովին փոխարինւում է տեղի այն խնայողութիւններով, որ հեղինակը յաջողել է անել զանազան կողմերից։

Օր. Նորայրը բառացուցակի ամեն մի ֆրանսերէն բառի մօտ դրել է և նրանց արտասանութիւնը հայերէն գրելով, որոնց գումարը բառական տեղ կը զրաւէ ամբողջ բառարանում. այն ինչ Գ. Լուսինեանը դրել է միայն այն բառերի արտասանութիւնը, որոնք շեղւում են ընթերցանութեան ընդհանուր կանոններից։ Սրանով տեղի զգալի խնայողութիւն է լինում, և չէ կարելի ասել, թէ սա որ և է փնտա ունենալ բառարանը գործածողի համար. որովհետեւ այսպիսի ընդարձակ բառարանից օգտուել ցանկացողը անհրաժեշտաբար պէտք է գիտենալ ֆրանսերէնի հնչիւնների և ընթերցանութեան տարբական կանոնները, ուրեմն աւելորդ ծանրաբեռնութիւն է կրկնել այն՝ ինչ որ յալտնի պէտք է լինի ամեն մի գործածողի։

Բացի սրանից՝ հեղինակը խիստ հետևողութեամբ գործ է ածել զծիկները՝ փոխանակ բառացուցակի բառը կրկնելու, ինչպէս նաև կէտադրութիւնը և ուրիշ պայմանական նշանները, մանաւանդ բազմաթիւ համառօտագրութիւնները։ Վերջիններս այնքան շատ են (319) և այնքան կրճատ, որ արդէն դժուար գործածելի են դարձնում բառարանը։

Օր. ի՛ նշանակում է իգական, իսկ իգ՝ իրաւագիտութիւն. զլա՝ նշա-

\*) Իսկապէս՝ 55 տող. բայց քանի որ Նոր բառարանի սխնակը պարունակում է Նորայրի սխնակի  $\frac{2}{3}$  նիւթը՝ ուստի ալատեղ և լաջորդ օրինակներում նրա տողերի թիւը  $\frac{2}{3}$  մասով պակասացրել ենք, որպէսզի նիւթի քանակութեան համեմատութիւնը ճիշտ լինի։



նակում է «զարդիս լատգոյն ասի»։ մկր՝ կարծում էք նշանակում է ամակբալ, բայց դուրս է գալիս՝ ամանկարարծութիւն, բ՛ կարծում էք նշանակում է բբալ, բայց դուրս է գալիս բրուսարանութիւն և ալլն

Նոր բառարանի այս առաւելութիւնների հետ պէտք է յիշել և պակասութիւններ, որոնցից նա զժբախտաբար ազատ չէ մնացել։ Սրանք հետևանք են հեղինակի— թոյլ տրուի մեզ ասել— սխալ հայեացքի բառարանագրութեան վրայ։

Հեղինակը միտքը դրել է՝ ամեն մի ֆրանսերէն բառի դէմ դնել անշուշտ հայերէն թարգմանական բառ, կամ արդէն գոյութիւն ունեցող, կամ ինքնաստեղծ։ Հիմա մի կողմից երևակայեմք ֆրանսերէն հարուստ լեզուն, որ ունի դարաւոր զարգացում և անազին գրականութիւն՝ գիտութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ, որ լատինական և յունական արմատներից օգտուում է ազատաբար և տասնեակ հազարներով բարդութիւններ է կազմում, որ ուրիշ լեզուներից էլ աննախանձաբար փոխ է առնում իր չունեցած բառերը։ Միւս կողմից ի նկատի առնենք մեր աղքատիկ լեզուն, խեղճ գրականութիւնը, որի մէջ չեն յիշուած նոյնիսկ անուններն այն գիտութիւնների, որոնց վրայ բազմաթիւ մասնագիտական շարադրութիւններ կան ֆրանսերէն լեզուով։ Աւելացնենք նաև մեր թունդ հայերէնասէրների խորշանքը օտարազգի բառեր գործածելու դէմ, այս «աղքատ ու հպարտ»-ութիւնը։ Ուրեմն նախապէս կարող ենք գուշակել, որ նոր բառարանում պատահելու են հազարաւոր նորաստեղծ բառեր, որոնք նրան պէտք է զրկեն բնականութիւնից և տան արուեստական գոյն։ Այս կէտում համեմատութիւնը Նորայրի և այս նոր բառարանի մէջ շատ խրատական է։ Նորայրի համար ամեն մի գործածած հայերէն բառը սրբութիւն է. նա էլ, ինչպէս և Գ. Լուսինեանը, զրաբարի բառեր և լեզու են գործածում իրանց բառարաններում։ Երկուսն էլ, հարկը պահանջած դէպքում, դիմում են նորաբանութեան, նորաստեղծ բառերի և աշխարհաբարի օգնութեան։ Բայց Նորայրը նորաստեղծ բառերը որոշում է աստղանիշով, նորաբանութիւնները (այսինքն հին բառեր նոր նշանակութեամբ գործածուած) կրկնակի աստղանիշով, աշխարհաբար բառերը Ս. (ստորին հայերէն) նշանով, գաւառական բառերը՝ Գ-ով. շատ յաճախ էլ, երբ մի ծանօթ բառ գործ է ածում անսովոր նշանակութեամբ՝ հին և միջին դարերի հայ հեղինակներից վկայութիւններ է բերում, որոնք արդարայնում են այդ անսովոր նշանակութիւնը։ Այնպէս որ Նորայրի բառարանը գործ ածողը կատարեալ գիտակցութիւն ունի, թէ նրա առաջարկած բառերը որ աստիճանի ընտիր են, և բոլորովին ապահով է նրա տուած հայերէն բառամթերքի հարադատու-



Թեան մասին: Աւելացնենք և այն, որ Նորայրի մօտ նորաստեղծ բառերը ընդհանրապէս ճաշակաւոր են, գոնէ լեզուի օրէնքների դէմ չեն մեղանչում:

Բոլորովին ուրիշ երևոյթ է նկատուում նոր բառարանում: Գործ ածողը նրա մէջ պատահում է նորանոր, նորանշան բառերի հեղեղի, անթիւ բարդութիւնների, արմատական կերպարանք ունեցող, բայց անծանօթ բառերի, և չէ կարող որոշել, թէ որտեղից են դրանք. հեղինակի ստեղծագործութիւններն են, թէ ուրիշ աղբիւրներից առնուած: Բայց այս դեռ ոչինչ. բարդութիւնները երբեմն այնպիսի ձևով են եղած, այնպիսի հրէշաւոր «բառեր» են չինուած, որ հայ ականջը և հայ լեզուի ճաշակը փշաքաղուում են: Հարիւրաւորներից բերենք մի քանի օրինակ.

Նոր բառարանում պատահում ենք այսպիսի բառերի. պարսնաչուանել (Débasser—պարանին կապուած չուանն քակելը. Նոր. ունի. պուծանել զծայր չուանի, որ պինդ ունի զպարանն): արգէլարածիլ (Forpaizer—եղթթալ արածիլ լարգելեալ տեղով). Նոր. ունի. «Թողուլ (էրէտ) զընիկ դադարան և երթալ ի հեռաստան. Ս. ըստեղրիլ»): Խոտազադարել (Étancher. «զադարեցուցանել զհոտումն... չորցունելը. Նոր. ունի. «զադարեցուցանել զհոտումն»): Լադրամ (Appoint—գրամն ամբողջացուցիչ դամարի». Նոր. ունի «մնացորդը պարտուց»): Վիկկետառախոյս (échappé de Bicêtre)—«լիմարանոցէ փախած»): աղեծաճառաւարաւորիւն (Entéro myase), աղեծփօնապարսաւորիւն (Entéropiplophalocèle):

Դժուար թէ ճաշակ ունեցող հայ մարդը կարողանայ հաշտուել այդ տեսակ նոր «բառերի» հետ, և դժուար թէ սրանք երբ և իցէ իսկապէս բառ դառնան: Դրանք ծնած օրից մեռած են և այս բառարանից դուրս, կեանքի և գրականութեան մէջ, գործածութիւն չեն ունենայ: Շատ ցանկալի է անշուշտ հարուստ լեզու ունենալ, եւրոպացու ամեն մի բառին դէմ հայերէն պատրաստ բառ: Բայց դրա համար հարկաւոր են բաղմամբիւ պայմաններ, որոնց քննութեան մէջ այստեղ չենք կարող մտնել. մի մոգական գաւազանով, կարէնէտում նստած մի հեղինակի թխուածքներով լեզուն չի հարստանայ, այլ կ'աղաւաղուի: Ասած է. եթէ հաւը կամենայ սագի ձու ածել՝ կը տրաքուի:

Մի ուրիշ խոշոր պակասութիւն, որ դարձեալ բղիւում է հեղինակի թիւր հայեացքից՝ Թարգմանական հայերէն բառերի կուտակութիւնն է: Բառարան կազմողի պարտականութիւնն է՝ օտարազգի բառի ճիշտ և մանրամասն նշանակութիւնները տալ, փոխաբերական առումները բացատրել, ոճաբանութիւնները հասկանալի դարձնել: Բայց նոր բառարանի հեղինակը մտադրուել է աւելին անել. նա կամեցել է հայ թարգմանիչների առաջ դնել հայերէն լեզուի այն բոլոր բառամթերքները, որոնք որ և է դէպ-



քում կարող են օգտակար լինել այս կամ այն ֆրանսերէն բառը թարգմանելու ժամանակ: Այս տենչով բռնուած՝ նա մի հատիկ ֆրանսերէն բառի դէմ դնում է երբեմն տասը, քսան և աւելի հայերէն բառեր:

Այսպէս՝ Débat բառի համար դրուած են 11 թարգմանական բառեր, Débauché-ի դէմ 19 բառ, Formidable-ի դէմ 21 բառ. Empressé բառի դէմ կարգում ենք. յօժար, յօժարամիտ, մտալօժար, փոյթ, փութաշարք, յօժարափոյթ, յօժարասէր, յօժարակամ, սիրալօժար, բարեյօժար, քաջափոյթ, փութալորդոր, փութկոտ, փոյթեռանդն, անձնապատրաստ, դիրապատրաստ, պատրաստական, մշտապատրաստ, յառաջամատոյց, բազմալորդոր, յորդորամիտ, մտադիր, բարեյորդոր, յօժարախորժ, ժաշկան, ջանասէր, փութասիրտ, շտտափոյթ, կամակար, վաղվադուն, վաղվադկոտ, վաղվադուկ, եռանդոտ, եռանդուն=34 բառ:

Այս մի օրինակը շատ լաւ է բացատրում, թէ հեղինակն ինչպէս է նայում իր, իբրեւ բառարանագրի, պարտաւորութեան վրայ: Նա կարծես հայերէն բառերի ցուցահանդէս է բաց անում, կամ բառերի վաճառանոց, որ եկողը նայի, հաւանի, ուղածն առնէ տանի: Բայց նրա առաջին պարտաւորութիւնն էր՝ *empressé* բառի ճիշտ նշանակութիւնը տալ, որպէսզի այս բառարանին դիմողը նրա օգնութեամբ այդ բառը հասկանար: Եւ սակայն բառարանն այդ էականը, ճիշտ նշանակութիւնը չէ տալիս, և նրան դիմողը ընկնում է տարակոյսների և անորոշութեան մէջ. ինչ է նշանակում իսկապէս *empressé*—նա չը գիտէ, չը նայելով 34 հայերէն բառերին: Ապացոյցի համար փորձենք թարգմանել մի ամենասովորական նախադասութիւն այդ բառով. «*je suis fort empressé*»—«ես շատ *empressé* եմ»: Հիմա դուք, ընթերցող, հայերէն «ես շատ *empressé* եմ» նախադասութեան մէջ փորձեցէք *empressé* բառը փոխարինել բառարանի առաջարկած 34 բառերով, որպէսզի հասկանաք ֆրանսերէն «*je suis fort empressé*» խօսքը. դուք շատ կ'աշխատէք, *cous* սխալների մէջ կ'ընկնեք, բայց էլի գլխի չէք ընկնի, թէ այդ նախադասութիւնը պարզապէս նշանակում է. «շատ շտապում եմ», «շատ վաղ եմ»: Տեսնում ենք ուրեմն, որ թարգմանական բառերի կուտակութիւնը, եթէ ֆրանսերէնը արդէն գիտցողների համար երբեմն կարող է օգտակար լինել՝ ընդհանրապէս փնասակար է և բացարձակ դատարարտելի՝ մի բառարանի մէջ: Նորայրը նոյն *empressé* բառի դէմ դրել է «փոյթ. փութկոտ»—միայն երկու բառ, որ կարծութեան հետ ունի և այն առաւելութիւնը, որ գոնէ ֆրանսերէն բառի նշանակութիւնը աշխատում է ճշտել տալ. Նորայրի բառարանով հայը ո՞րո՞ւ հասկացողութիւն է կազմում *empressé* բառի մասին, իսկ նոր բառարանով մուք և խառն:

Այս նկատողութիւնը կարելի է անել շատ հարիւրաւոր



բառերի մասին. մեր բերած օրինակը բացառիկ չէ, այլ մէկը բազմաթիւ օրինակներից: Նրեցթը ընդհանուր է և շատ ցաւալի: Չենք կարող լռութեամբ անցնել և մի ուրիշ պակասութիւն, որ արդէն բուն հայերէն լեզուագիտութեան է վերաբերում: Հեղինակը գործ է ածում շատ անգամ այնպիսի բառեր, որոնց նշանակութիւնը խիստ կասկածելի է, կամ որոնք միանգամայն անծանօթ են, երբեմն նոյնիսկ սխալ՝ կամ նշանակութեամբ կամ քերականական ձևով: Յաճախ պատահում է և այն, որ մի գրաբար դարձուածքի կամ բառի մօտ դնում է աշխարհաբար դարձուածք կամ բառ, բայց սրանք նշանակութեամբ համապատասխան չեն գրաբարին: Շատ օրինակներից դարձեալ բերում ենք մի-երկուսը: Ո՞վ է լսել կոլոդուր, լոգաւեռ, շոն, տոնաւի, շոնալի, և այլ այսպիսի բառեր: Շոն (կրախմալ) առաջին անգամ գործ է ածել Նորայրը, նշանակելով որ դա գաւառական բառ է: Նրանից առել է Քաջունին, առանց իր աղբիւրը և բառի գաւառական ծագումը նշանակելու. այդ տեղերից էլ նա մուտք է գործել այս բառարանի մէջ, ի հարկէ, դարձեալ առանց անցաթղթի: Լոգաւերտ (Darne) բառի գաղտնիքը կարելի է հասկանալ՝ ուրիշ բառարանների օգնութեան շնորհիւ: Նոր բառարանում գրուած է «Darne—լոգաւեռ (saumon) եւ լոգաւեռ (alose)». ուրիշ ոչինչ: Դժուար թէ ընթերցողը հասկանայ կամ Darne բառի նշանակութիւնը, կամ լոգաւեռիցն լոգաւեռիցն: Սակայն գաղտնիքը բացւում է այսպէս. Նորայրը Alose բառի դէմ (որ մի ձկան անուն է) դրել է լոգ, (հարցական նշանով, որ ցոյց է տալիս, թէ նա տարակուսում է Alose-ի և լոգի նոյնութեան մասին): Նոր բառարանը նոյն Alose բառի դէմ դրել է առաջին տեղում լոգ (առանց հարցականի և առանց աղբիւրը նշանակելու). և որովհետեւ darne նշանակում է ձկան չերտ \*), ուստի լոգ բառից բարդել է լոգաւերտ. (իսկ լոգաւերտը ձրտեղից է՝ այդ չը կարողացանք իմանալ): Բայց բառը սխալ է կազմուած. լոգաւերտ կարող է շատ շատ՝ նշանակել լոգ ձկան չերտ, այն ինչ darne նշանակում որ և է խոշոր ձկան չերտ, և ոչ թէ միայն լոգի—Enfant naturel նոր բառարանում թարգմանուած է. «բնական զաւակ, աղջկորդի, հարճորդի, չնորդի, բողբոջի, որդի անհարազատ, խորթ որդի»: Թողնենք այն, որ ֆրանսերէն բառը երբէք չունի այն նախատական, հայհոյական բնաւորութիւնը, որ տալիս են հայերէն բողբոջի, չնորդի (=չան

\*) Larousse-ի բառարանն ունի («Darne—tranche d'un poisson, comme saumon, alose etc.», Նորայրը ունի. («Darne—պատու, մասն ձկան մեծի», որ շատ ճիշտ է):



որդի) բառերը, այլ լուկ նշանակում է ապօրինի գաւակ (Նորայրը Naturel բառում դնում է. «Մենալ արտաքոյ ամուսնութեան (որդի) բնական. (զօրինաւոր)»): Խնդիրն այն է, որ «խորթ որդի» բառը հեղինակը գործ է ածում իբրև աշխարհաբար բացատրութիւն *enfant naturel*-ի, այսինքն, նրա կարծիքով՝ խորթ որդի աշխարհաբարում նշանակում է հարձորդի, աղջկորդի, չնորդի, բողոքդի և այլն: Սխալը ակնհերև է և շատ զգուշալի, *Entrer en guerre* նոր բառարանում թարգմանուած է «ի մարտ արշաւել. պատերազմի սկսիլ»: Վերջին, աշխարհաբար թարգմանութիւնը աւելի յարմար է ֆրանսերէնին. բայց նա չէ համապատասխանում գրաբար «ի մարտ արշաւել»-ին, որ նշանակում է «դէպի կռիւ վազել» և բնորոշ դարձուածք է՝ հին ժամանակի կռուի եղանակը, «նահատակութիւնները» բացատրելու համար: *Entrer dans une académie* (ակադեմիա մտնել) թարգմանուած է. մտանել՝ յօգանալ ճեմարանի: Վերջին բացատրութիւնը (յօգանալ ճեմարանի) հեղինակն առել է Խորենացուց («ի ստոյգ յօգանալ ճեմարանի»), որի այս խօսքը թարգմանիչներին համար մութ, անորոշ է՝ յօգանալ անձանօթ բառի պատճառով: Նոր բառարանը, առանց կարիքի, առել է այս անստոյգ դարձուածքը և գործածել իբրև անտարակուսելի ստոյգ դարձուածք, այն էլ քերականօրէն սխալ ձևով. պէտք էր դռնէ գրել մտանել ի նեմարան, յօգանալ ի ճեմարանի (ինչպէս ուղիղ ունի Խորենացին): Նախդիրները կրճատելով՝ սխալ լեզու է ստացուել և անհասկանալի բացատրութիւն: Նոյնպէս գրաբար չեն ասում «խելամուտ առնել ումեք ինչ», ինչպէս գործ է ածում հեղինակը («անհնարին է խելամուտ առնել նմա ինչ», *Entrer բառում*), այլ խելամուտ առնել զոք իմիք: Եւ այլն և այլն:

Մի ընդարձակ հատոր հարկաւոր կը լինէր գրել՝ սպառելու համար բոլոր նկատողութիւնները նոր բառարանի թերութիւնների կամ սխալների մասին. իսկ մեր յօդուածը արդէն իսկ դուրս եկաւ սահմանուած ծաւալից: Ուստի ստիպուած ենք կանգ առնել այստեղ և մի համառօտ եզրակացութիւն անել՝ հիմնուելով մեր ասածների և չասածների վրայ:

Նոր բառարանը իւր նկարներով, մանրամասնութեամբ, մասնագիտական բառերով օգտակար է ամեն մի գործ ածողի: Թարգմանական (հայերէն) մասը կարող է օգտակար լինել միայն նրանց, որոնք ֆրանսերէն բաւական լաւ գիտեն, այսինքն թարգմանիչներին, բայց վտանգաւոր, նոյն իսկ վնասակար է նրանց համար, որոնք այս բառարանի օգնութեամբ կամենում են ֆրանսերէն բնագիրը հասկանալ: Այս բառարանը կարող են գործածել միայն հմուտները, այն էլ մեծ զգուշութեամբ ընտրութիւն



անելով բազմախուռն թարգմանական բառերի մէջ: Նորայրի բառարանը չը նայելով իր համեմատական համառօտութեան՝ ստուգարան, վստահելի, գիտնական աշխատութիւն է, նոր բառարանը աւելի գործնական ուղղութիւն ունի, բայց ամեն քայլափոխում կատարածի է:

Իբրեւ վերջաբան՝ մի նկատողութիւն ևս, որ բառարանից դուրս է և ընդհանուր դարձած մի գրական ազեղ երևոյթի է վերաբերում: Շատ և շատ փաստեր կան նոր բառարանում, որոնք ապացուցանում են, թէ նրա հեղինակը մեծ չափով օգտուել է Նորայրից:

Համեմատել, օր. Appointer. Նորայր՝ «Հրաման տալ դատարարի (վկայա լսող բերելոյ)». Լուսինեան՝ «Հրաման տալ դատարարի (վկայա լսող բերելոյ)». Etoile filante, tombante. Նորայր՝ «Թափեալ, սլացեալ, սահեալ, թռիչ ասող, Ս. ասուպ». Լուսինեան՝ սլացեալ՝ սահեալ՝ թափեալ՝ թռիչ ասող, թռիչ, ասուպ». և շատ ուրիշները:

Յայտնի է միւս կողմից, որ մեզանում գրական մեծ կրկասիրութիւնների ձեռնարկողները մի տեսակ նահատակներ են, որոնց ոչ միայն մտաւոր աշխատանքը նիւթապէս չէ վարձատրում, այլ դեռ իրանցից էլ գրամական գոհարերութիւն է պահանջւում: Այս գէպքում նրանց վարձատրութիւնը՝ միակ բարոյականը պէտք է լինի. պէտք է որ նրանցից օգտուող, իբրեւ աղբիւր գործածող ամեն մի հեղինակ՝ նուիրական պարտք համարէր յիշել իր նահատակ նախորդին՝ իբրեւ օժանդակ, իբրեւ աղբիւր իր աշխատութեան: Այս պարտականութիւնն աւելի ևս ստիպողական է ներկայ գէպքում, երբ Նորայր իր բառամթերքից նշանաւոր մասը քաղել է ինքնուրոյնաբար, ձեռագիրները քրքրելով, փոշու միջից լոյս աշխարհ հանելով, իսկ նոր բառարանի հեղինակը այդ պատրաստ նիւթը, առանց աշխատանքի, արտագրել է նրանից: Սակայն արդար լինելու համար աւելցնենք, որ Նորայրի հետ նոյնպէս վարուել են և ուրիշները, և որ գրական աղբիւրները չը յիշատակելու ախտը զժողովրդաբար ընդհանուր, շատ տարածուած երևոյթ է մեր մէջ:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

Յ) ՀԱՅԵՈՒՆԻ. Թագաւոր Լուսիկ և Սեփե Հովիկ. Վաղարշապատ, 1900 թ., գինը 25 կ.:

Հեքեաթանման այդ վէպի մէջ պատկերանում է Դերսիմի\*) վրանարնակ և խաչնարած ցեղերի հովուական կեանքը: Ժողո-

\*) Թիւրքաց Հայաստանի արեւմտեան մասում: